

Договор N 2.119

*Приобретение и работы по установке и наладке инструментальной системы посадки ILS/DME аэропорта <<Ширак>>*

г. Ереван < 24 > 05 2018г.

### 1. Стороны договора

ЗАО «Армаэронавигация», адрес РА, г. Ереван, 0042, ул. И.Гаспаряна 33, в лице Генерального Директора компании Артура Гаспаряна (далее Заказчик), действующего на основании устава компании с одной стороны и ООО НПО «РТС», адрес РФ, г. Челябинск, 454005, ул. Монакова, д. 1, в лице Генерального Директора компании Александра Долматова (далее Исполнитель), действующего на основании устава компании с другой стороны (отныне обе стороны вместе будут названы как Стороны), заключили настоящий договор (далее Договор) о следующем:

### 2. Предмет договора

2.1 Согласно Договору, Заказчик приобретает у Исполнителя инструментальную систему посадки ILS/DME (далее Оборудование), работы по исследованию местности, установке, наладке Оборудования и практические занятия (далее Работа).

2.2 Характеристики оборудования, а также представленные к ним требования отмечены в Приложении 1 настоящего Договора.

### 3. Цена договора и метод оплаты

3.1 Общая стоимость договора составляет 485000 (четыре сто восемьдесят пять тысяч) Евро (далее Стоимость Договора).

3.2 Расчет стоимости Договора и календарный план осуществления оплаты

Պայմանագիր N 2.119

*<<Շիրակ>> օդանավակայանի գործիքային վայրէջքային ILS/DME համակարգի ձեռքբերման, տեղադրման և կարգաբերման աշխատանքներ*

ք. Երևան < 24 > 05 2018թ.

### 1. Պայմանագրի կողմերը

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան-0042, Ի.Գասպարյան 33, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Արթուր Գասպարյանի (այսուհետև՝ Պատվիրատու), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա մի կողմից և ՕՕՕ ՈՍՕ «ՐԿ», հասցեն՝ ՌԴ ք.Չելյաբինսկ 454005, Մոնակովի շ.1, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Ալեքսանդր Դոլմատովի (այսուհետև՝ Կատարող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա մյուս կողմից (այսուհետև երկուսը միասին կանվանվեն՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

### 2. Պայմանագրի առարկան

2.1 Համաձայն Պայմանագրի, Պատվիրատուն Կատարողից ձեռք է բերում ILS/DME գործիքային վայրէջքային համակարգ (այսուհետև՝ Սարքավորում), տեղային ուսումնասիրության, Սարքավորման տեղադրման, կարգաբերման և գործնական պարապմունքների աշխատանքներ (այսուհետև՝ Աշխատանք):

2.2 Սարքավորման բնութագրերը ինչպես նաև դրանց ներկայացվող պահանջները ներկայացված են Պայմանագրին կից Հավելված 1-ում:

### 3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 485000 (չորս հարյուր ութսունհինգ հազար) Եվրո (այսուհետև Պայմանագրի գին):

3.2. Պայմանագրի գնի հաշվարկը և վճարման իրակացման օրացուցային պլանը ներկայացված են

представлены в приложениях (Приложение 2 и Приложение 3).

3.3 В общую стоимость Договора включены прибыль, а также все затраты Исполнителя, осуществляемые с целью обеспечения исполнения Договора, в том числе погрузки, перевозки, страховки, все затраты вывоза, налоги, пошлины и другие выплаты, которые Исполнитель обязуется осуществить в стране вывоза (производства).

3.4 Стоимость договора включает также те налоги, которые согласно пункту 3.7 Договора подлежат выплате в бюджет Республики Армения (далее РА).

3.5 Исходя из положений международных соглашений, с целью исключения двойного налогообложения доходов, нерезидент представляет налоговому агенту РА справку о том, что он является резидентом другой страны, где должно быть отмечено, что нерезидент является резидентом данной страны в данном году.

3.6 Включенные в стоимость Договора 80% суммы местных работ (см. Приложение 2 S, W) Заказчик выплатит Исполнителю, а по части остальных 20% - оплата Исполнителю будет осуществлена при наличии справки о резидентстве. Данная справка (см. Пункт 3.5) должна быть представлена до момента подписания протокола сдачи и приема работ.

3.7 В случае, если справка о резидентстве нерезидента не предоставляется, Заказчик перечисляет сумму налога на прибыль нерезидента, рассчитанную из сумм, уплаченных за работы, указанные в пункте 3.6 Контракта, в порядке и размере, установленных законодательством РА.

3.8 Выплаты стоимости Договора Заказчиком осуществляются посредством банковских переводов, на данный счет Исполнителя:

ИНН/КПП 7453099174/745101001,  
ОГРН 1037403874144  
ОКПО 148 401 81, ОКВЭД 33.30.9  
Тел.факс: +7 (351) 729-81-31

հավելվածներում (Հավելված 2 և Հավելված 3):

3.3 Պայմանագրի ընդհանուր գնի մեջ ներառված է շահույթը, ինչպես նաև Պայմանագրի իրականացումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվող բոլոր ծախսերը, այդ թվում բեռնավորման, տեղափոխման, ապահովագրման, արտահանման բոլոր ծախսերը, հարկերը, տուրքերը և այլ մուծումներ, որոնք Կատարողը պարտավոր է իրականացնել արտահանման (արտադրանքի) երկրում:

3.4 Պայմանագրի գինը ներառում է նաև այն հարկերը, որոնք համաձայն Պայմանագրի 3.7 կետի կվճարվեն Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) պետական բյուջե:

3.5 Միջազգային համաձայնագրի դրույթներից ելնելով՝ Եկամուտների կրկնակի հարկումը բացառելու նպատակով, ոչ ռեզիդենտը ՀՀ հարկային գործակալին ներկայացնում է մյուս պետության ռեզիդենտ հանդիսանալու մասին տեղեկանք, որում պետք է նշված լինի, որ ոչ ռեզիդենտը նշված տարում տվյալ երկրի ռեզիդենտն է:

3.6 Պայմանագրի գնում ներառված տեղային աշխատանքների գումարի (տես՝ S, W հավելված 2) 80%-ը Պատվիրատուն կվճարի Կատարողին, իսկ մնացած 20%-ի մասով վճարումը Կատարողին կիրականացվի ռեզիդենտության վերաբերյալ տեղեկանքի առկայության դեպքում: Նշված տեղեկանքը (տես՝ կետ 3.5) պետք է ներկայացվի մինչև աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահը:

3.7 Ոչ ռեզիդենտի ռեզիդենտության վերաբերյալ տեղեկանքը չներկայացնելու դեպքում Պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե է փոխանցում Պայմանագրի 3.6 կետում նշված աշխատանքների դիմաց վճարված գումարներից հաշվարկված ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարը:

3.8 Պատվիրատուի կողմից Պայմանագրի գնի վճարումները կատարվում են բանկային փոխանցումների միջոցով, Կատարողի հետևյալ հաշվեհամարին:

ИНН/КПП 7453099174/745101001,  
ОГРН 1037403874144  
ОКПО 148 401 81, ОКВЭД 33.30.9  
Հեռ.ֆաքս: +7 (351) 729-81-31

Account No 40702978590002000468  
Corr.acc. 400887199800  
Валюта счета EBPO  
BENEFICIARY BANK (Банк получателя):  
JSC CHELYABINVESTBANK  
Address: 454113, pl. Revolutsii 8, Chelyabinsk,  
Russia  
SWIFT: CHINRU4C  
CORRESPONDENT BANK (Банк-посредник):  
Commerzbank AG  
60261, Frankfurt am Main, Germany  
S.W.I.F.T.: COBADEFF

3.9 Заказчик выплачивает за Оборудование и Работу в безналичной форме, путем перевода соответствующей части стоимости Договора, на расчетный счет Исполнителя.  
Перевод денежных средств осуществляется на основе двусторонне подписанного протокола сдачи и приема (см. Приложение 5), в течение тридцати (30) календарных дней с даты подписания (график платежей согласно Приложению 3).

3.10 Заказчик выполняет платеж в 3 этапа:

3.10.1 Этап 1. После изучения местности, Исполнитель предоставляет заключение изучения местности и описания сооружений, необходимых для установки Оборудования. Составляется протокол сдачи и приема, на основе которого Заказчик выплачивает Исполнителю не более 20% от стоимости договора, после получения счет-фактуры.

3.10.2 Этап 2. После заводских испытаний (FAT) Оборудования, Исполнитель представляет сертификат о заводских испытаниях. Составляется протокол сдачи и приема, на основе которого Заказчик выплачивает Исполнителю не более 50% от стоимости договора, после получения счет-фактуры.

3.10.3 Этап 3. Выплата остальной части стоимости договора (B) производится по окончанию работ на местности, проверки на

Հաշվի համարը 40702978590002000468  
Corr.acc. 400887199800  
Հաշվի արժույթ ԵՎՐՈ  
BENEFICIARY BANK (Ստացողի բանկ):  
JSC CHELYABINVESTBANK  
Address: 454113, pl. Revolutsii 8, Chelyabinsk,  
Russia  
SWIFT: CHINRU4C  
CORRESPONDENT BANK (Բանկ-միջնորդ):  
Commerzbank AG  
60261, Frankfurt am Main, Germany  
S.W.I.F.T.: COBADEFF

3.9 Պատվիրատուն Սարքավորման և Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ Պայմանագրի գնի համապատասխան մասը Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:  
Դրամական միջոցների փոխանցումն իրականացվում է երկկողմանի ստորագրված հանձման-ընդունման արձանագրության հիման վրա (տես Հավելված 5) այն երկկողմանի ստորագրելուց հետո երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում (վճարման ժամանակացույցը՝ համաձայն Հավելված 3-ի):

3.10. Պատվիրատուն վճարումն իրականացնում է 3 փուլով՝

3.10.1 Փուլ 1: Տեղանքի ուսումնասիրությունից հետո Կատարողի կողմից ներկայացվում են տեղանքի ուսումնասիրության եզրակացությունը և Սարքավորման տեղադրման համար անհրաժեշտ կառույցների նկարագրերը: Կազմվում է հանձման-ընդունման արձանագրություն որի հիման վրա Պատվիրատուն Կատարողին է վճարում պայմանագրի գնի ոչ ավել քան 20%-ը՝ հաշիվ-ապրանքագիրը ստանալուց հետո:

3.10.2 Փուլ 2: Սարքավորումների գործարանային ստուգումներից (FAT) հետո Կատարողը ներկայացնում է գործարանային ստուգումների վկայական: Կազմվում է հանձման-ընդունման արձանագրություն որի հիման վրա Պատվիրատուն Կատարողին է վճարում պայմանագրի գնի ոչ ավել քան 50%-ը՝ հաշիվ-ապրանքագիրը ստանալուց հետո:

3.10.3 Փուլ 3: Պայմանագրի գնի մնացած մասի (B) վճարումը կատարել տեղային աշխատանքների, տեղային ստուգումների (SAT), գործնական

местности (SAT), практических занятий и летных проверок, на основе двусторонне подписанного протокола сдачи и приема, после получения счет-фактуры.

3.11 Протокол сдачи и приема (Приложение 5) будет подписан после устранения Исполнителем всех выявленных недостатков.

3.12 Право собственности по отношению к Оборудованию передается Заказчику по окончании заводских испытаний и после процесса вывоза Оборудования Исполнителем, до пересечения границы РА.

3.13 Заказчик своими силами и за свой счет осуществляет таможенное оформление Оборудования и выплату всех связанных с этим видов налогов, пошлин, расходов и обязательных выплат.

#### 4. Срок действия договора

4.1 Договор вступает в силу после двустороннего подписания Договора и действует до полного исполнения договорных обязанностей Заказчика и Исполнителя.

4.2 Общий срок исполнения Договора составляет 7 месяцев с момента вступления Договора в силу.

4.3 Календарный план выполнения этапов Договора представлен в Приложении 4.

#### 5. Спорные вопросы и применимое право

5.1 Термины и положения Договора интерпретируются согласно действующему законодательству РА.

5.2 По отношению к возникшим между Сторонами спорам применяется право РА, а судебные споры подлежат рассмотрению в соответствующем суде РА.

պարապմունքների և թռիչքային ստուգումների ավարտից հետո, երկկողմ ստորագրված հանձնաճանձնադրման արձանագրության հիման վրա՝ հաշիվ-ապրանքագիրը ստանալուց հետո:

3.11 Հանձնաճանձնադրման արձանագրությունը (Հավելված 5) կստորագրվի հայտնաբերված բոլոր թերությունները Կատարողի կողմից վերացնելուց հետո:

3.12 Սարքավորումների նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է Պատվիրատուին գործարանային ստուգումների ավարտից և Կատարողի կողմից Սարքավորումների արտահանման գործընթացից հետո՝ մինչև ՀՀ սահման հատելը:

3.13 Պատվիրատուն իր ուժերով և իր հաշվին իրականացնում է Սարքավորումների մաքսագերծումը և դրա հետ կապված բոլոր տեսակի հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների ծախսերն ու վճարումները:

#### 4. Պայմանագրի գործողության ժամկետները

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պայմանագրի երկկողմ ստորագրումից հետո և գործում է մինչև Պատվիրատուի ու Կատարողի կողմից իրենց պայմանագրային պարտավորությունների լրիվ կատարումը:

4.2. Պայմանագրի կատարման ընդհանուր ժամկետը Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 7 ամիս է:

4.3 Պայմանագրի փուլերի իրականացման օրացուցային պլանը ներկայացված է Հավելված 4-ում:

#### 5. Վիճելի հարցերն ու կիրառվող իրավունքը

5.1. Պայմանագրի տերմինները և դրույթները մեկնաբանվում են ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

5.2. Կողմերի միջև ծագած վեճերի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը, իսկ դատական վեճերը ենթակա են քննության ՀՀ համապատասխան դատարանում:

## 6. Язык договора

Договор составляется в двух экземплярах, на двух языках – армянском и русском. В случае возникновения разногласий между армянским и русским вариантами, разница интерпретируется в пользу Исполнителя.

## 7. Прием поставки Оборудования и выполнения работ

7.1 Поставка оборудования Исполнителем должна быть осуществлена согласно предусмотренным приложениями техническим характеристикам (Приложение 1) и календарному плану (Приложение 4) исполнения Договора.

7.2 Стороны, не нарушая предусмотренные в приложениях договора сроки поставки, могут прийти к согласию о сроках отдельных этапов поставки Оборудования. В том случае, когда подобного согласия нет, поставка Оборудования осуществляется в один этап.

7.3 Поставка оборудования Заказчику осуществляется согласно условиям «Incoterm 2010, DAT» Международной торговой палаты, до РА, г. Гюмри, таможенный терминал.

7.4 Оборудование должно быть упаковано и маркировано. Упаковка должна обеспечить безопасность и сохранность Оборудования. Маркировка должна позволять быстро и легко отличать Оборудования от какого-либо другого оборудования.

7.5 Результаты исполнения договора или какой-либо его части принимаются подписанием между Заказчиком и Исполнителем протокола сдачи и приема, а факт сдачи результата договора Заказчику фиксируется двусторонне утвержденным документом, отмечая при этом дату составления документа.

До дня окончания, включая этот день выполнения предусмотренных настоящим договором Работ, Исполнитель представляет Заказчику два экземпляра подписанного им протокола сдачи и приема (Приложение 5) о

## 6. Պայմանագրի լեզուն

Պայմանագիրը կազմվում է երկու օրինակից, երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն: Հայերեն և ռուսերեն տարբերակների միջև տարաձայնություններ ծագելու դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ Կատարողի:

## 7. Սարքավորումների մատակարարման և Աշխատանքների կատարման ընդունումը

7.1 Կատարողի կողմից Սարքավորման մատակարարումը պետք է իրականացվի Պայմանագրի հավելվածներում նախատեսված տեխնիկական բնութագրերի (Հավելված 1) և Պայմանագրի կատարման օրացուցային պլանի (Հավելված 4) համաձայն:

7.2 Կողմերը, չխախտելով Պայմանագրի հավելվածներում նախատեսված մատակարարման վերջնաժամկետը, կարող են համաձայնության գալ Սարքավորման մատակարարման առանձին փուլերի ժամկետների վերաբերյալ: Այն դեպքում, երբ այդպիսի համաձայնություն չկա, Սարքավորման մատակարարումն իրականացվում է մեկ փուլով:

7.3 Պատվիրատուին Սարքավորման մատակարարումն իրականացվում է համաձայն Միջազգային առևտրային պալատի «Incoterm 2010, DAT» պայմանների՝ մինչև ՀՀ, ք.Գյումրի մաքսային տերմինալ:

7.4 Սարքավորումը պետք է լինի փաթեթավորված և մակնշված: Փաթեթավորումը պետք է ապահովի Սարքավորման անվտանգությունն ու պահպանվածությունը: Մակնշումը պետք է թույլ տա արագորեն և հեշտությամբ տարբերել Սարքավորումը որևէ այլ սարքավորումից:

7.5 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատակարարված Սարքավորումների և կատարված Աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու

выполненных им Работам и поставленным Оборудованиям, а также документ (Приложение 6), фиксирующий факт сдачи Заказчику результатов договора, а посредством электронной системы закупок armeps (руководство к действию размещено в отделе “Электронные закупки” по адресу [www.procurement.am](http://www.procurement.am)) также протокол сдачи и приема (Приложение 5). При этом, Исполнитель не проставляет печать в протоколе сдачи и приема, утверждает его электронной подписью, заполняя лишь те колонки, которые касаются данных о нем (порядок заполнения размещен в подразделе “Приказы министра финансов” раздела “Законодательство” по адресу [www.procurement.am](http://www.procurement.am)).

7.6 Если поставленное Оборудование и выполненные Работы соответствуют условиям договора, Заказчик в течение 5 рабочих дней со дня следующего дня получения списка документов, отмеченных в пункте 7.5, подписывает и посредством системы электронных закупок armeps предоставляет Исполнителю подписанный с его стороны протокол сдачи и приема, а также положительное заключение, послужившее основанием для его подписания.

7.7 Если в установленный пунктом 7.5 договора срок, Заказчик не принимает поставленное Оборудование и выполненную Работу, либо не отвергает ее прием, то Оборудование и Работы считаются принятыми и на следующий установленный пунктом 7.5 договора за сроком рабочий день, Заказчик путем системы электронных закупок предоставляет Исполнителю подписанный с его стороны протокол сдачи и приема.

7.8 Если поставленное Оборудование и выполненные Работы или какая-либо их часть не соответствует условиям договора, то Заказчик не подписывает протокол сдачи и приема и в отмеченный в пункте 7.6 договора срок, путем системы электронных закупок armeps Исполнителю возвращается протокол сдачи и приема, а также отрицательное заключение, послужившее основанием для его неподписания. В случае применения

орինակ (Հավելված N 5) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 6), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N5): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

7.6 Եթե մատակարարված Սարքավորումները և կատարված Աշխատանքները համապատասխանում են պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 7.5 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

7.7 Եթե պայմանագրի 7.5 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված Սարքավորումները և կատարված Աշխատանքները կամ չի մերժում դրա ընդունումը, ապա Սարքավորումները և Աշխատանքները համարվում են ընդունված և պայմանագրի 7.5 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7.8 Եթե մատակարարված Սարքավորումները և կատարված Աշխատանքները կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 7.6 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

данного пункта, Заказчик предпринимает для данной ситуации средства, предусмотренные договором, и по отношению к Исполнителю предпринимает предусмотренные договором меры ответственности.

7.9 Исполнитель должен представить сертификаты соответствия и качества оборудования.

### **8. Заводские испытания Оборудования (FAT)**

8.1 Исполнитель в календарном плане исполнения договора (Приложение 4) должен в предусмотренные сроки обеспечить заводские испытания Оборудования (FAT).

8.2 Заводские испытания Оборудования проводятся на территории Исполнителя, его техническими силами и средствами до их поставки, после того, как Оборудование будет полностью готово.

8.3 Заводские испытания проводятся в присутствии специалистов ЗАО “Армаэронавигация”. Присутствие своих специалистов на заводских инспекциях ЗАО “Армаэронавигация” обеспечивает за свой счет.

8.4 Исполнитель должен проинформировать ЗАО “Армаэронавигация” о проведении заводских испытаний не позднее, чем за 10 дней до их начала. По окончании заводских испытаний Стороны подписывают свидетельство заводского приема (далее FAT), и составленный на его основании протокол сдачи и приема является основанием для соответствующей выплаты.

8.5 Итоги заводских испытаний должны соответствовать представленным в Приложении 1 договора техническим характеристикам.

8.6 В случае неучастия представителя Заказчика в FAT, Исполнитель в течение 10 (десяти) рабочих дней отправляет Заказчику подписанное с его стороны Свидетельство FAT.

Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

7.9 Կատարողը պետք է ներկայացնի սարքավորումների համապատասխանության և որակի հավաստագրեր:

### **8. Սարքավորման գործարանային ստուգումներ (FAT)**

8.1 Կատարողը պետք է ապահովի Սարքավորման գործարանային ստուգումները (FAT) Պայմանագրի կատարման օրացուցային պլանում (Հավելված 4) նախատեսված ժամկետների համաձայն:

8.2 Սարքավորման գործարանային ստուգումներն անցկացվում են Կատարողի տարածքում, նրա տեխնիկական ուժերով և միջոցներով մինչև դրա մատակարարումը՝ այն բանից հետո, երբ Սարքավորումն ամբողջությամբ պատրաստ կլինի:

8.3 Գործարանային ստուգումներն իրականացվում են <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ մասնագետների ներկայությամբ: Գործարանային ստուգումներին իր մասնագետների ներկայությունը <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ ապահովում է իր հաշվին:

8.4 Գործարանային ստուգումների անցկացման մասին Կատարողը պետք է տեղեկացնի <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ դրանց սկսելուց ոչ ուշ քան 10 օր առաջ: Գործարանային ստուգումների ավարտից հետո Կողմերը ստորագրում են գործարանային ընդունման վկայական (այսուհետ FAT), որի հիման վրա կազմված հանձնման-ընդունման արձանագրությունը հիմք է հանդիսանում համապատասխան վճարման համար:

8.5 Գործարանային ստուգումների արդյունքները պետք է համապատասխանեն պայմանագրի Հավելված 1-ում ներկայացված տեխնիկական բնութագրերին:

8.6 FAT-ին Պատվիրատուի ներկայացուցչի չմասնակցելու դեպքում Կատարողը իր կողմից ստորագրված FAT վկայականը 10 (տասն) աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է Պատվիրատուին:

## 9. Выполнение работ

9.1 Заказчик должен в согласованные сроки осуществлять предусмотренные пунктом 12.8 Договора обязанности. В случае задержки по причине не выполнения предусмотренных обязательств, календарный план выполнения Работ соответственно продлевается.

9.2 В случае обнаружения несоответствий Оборудования, Исполнитель в течение 30 (тридцати) рабочих дней обязан устранить несоответствия.

9.3 По окончании таможенного оформления и по получении уведомления со стороны Заказчика, Исполнитель в 15-дневный срок направляет своих специалистов на место размещения Оборудования (РА, г.Гюмри, аэропорт "Ширак"), где должна быть осуществлена Работа.

9.4 Заказчик обеспечивает на рабочих местах все необходимые для Работы условия, как описано в пункте 12.8 Договора.

9.5 Исполнитель осуществляет работы по установке и наладке Оборудования, согласно календарному плану исполнения Договора (Приложение 4).

До начала работ по установке и наладке, Исполнитель осуществляет изучение местности, после чего обязан представить Заказчику заключение об изучении местности и необходимое для размещения Оборудования описание сооружений, включая спецификацию материалов.

Согласно описанию сооружений необходимых для размещения Оборудования, представленного Исполнителем, Заказчик выполняет необходимые работы за свой счет.

9.6 При участии специалистов Сторон осуществляются проверки на местности (SAT), согласно календарному плану исполнения Договора (Приложение 4) составляется свидетельство SAT.

## 9. Աշխատանքի կատարումը

9.1 Պատվիրատուն պետք է իրականացնի Պայմանագրի 12.8 կետով նախատեսված պարտավորությունները համաձայնեցված ժամկետում: Նախատեսված պարտավորությունների չիրականացման պատճառով առաջացած ուշացման դեպքում, Աշխատանքի իրականացման օրացուցային պլանը համապատասխանորեն երկարաձգվում է:

9.2 Սարքավորման անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում, Կատարողը 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է վերացնել անհամապատասխանությունները:

9.3 Մաքսագերծման ավարտից և Պատվիրատուից ստացված ծանուցումից հետո, Կատարողը 15-օրյա ժամկետում իր մասնագետներին ուղարկում է Սարքավորման տեղադրման վայրը (ՀՀ, ք.Գյումրի, «Շիրակ» օդանավակայան), որտեղ պետք է կատարվի Աշխատանքը:

9.4 Պատվիրատուն աշխատատեղերում ապահովում է Աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր պայմանները, ինչպես նկարագրված է Պայմանագրի կետ 12.8-ում:

9.5 Կատարողը իրականացնում է Սարքավորման տեղադրման և կարգաբերման աշխատանքները Պայմանագրի կատարման օրացուցային պլանի (Հավելված 4) համաձայն:

Մինչև տեղադրման և կարգաբերման աշխատանքների սկիզբը Կատարողը իրականացնում է տեղանքի ուսումնասիրություն, որից հետո պարտավոր է Պատվիրատուին ներկայացնել տեղանքի ուսումնասիրության եզրակացությունը և Սարքավորման տեղադրման համար անհրաժեշտ կառույցների նկարագիրը՝ ներառյալ նյութերի սպեցիֆիկացիան:

Ըստ Կատարողի ներկայացրած Սարքավորման տեղադրման համար կառույցների նկարագրի Պատվիրատուն կատարում է անհրաժեշտ աշխատանքները իր հաշվին:

9.6 Կողմերի մասնագետների մասնակցությամբ իրականացվում են տեղային ստուգումներ (SAT), կազմվում է SAT Վկայական Պայմանագրի կատարման օրացուցային պլանի (Հավելված 4) համաձայն:

9.7 Результаты SAT должны соответствовать всем требованиям технических характеристик, представленным в Приложении 1 Договора.

9.8 После проверки на местности Заказчик организывает и осуществляет летные проверки по программе ввода в эксплуатацию, в которой принимают участие специалисты Исполнителя. Согласно календарному плану исполнения Договора (Приложение 4) составляется акт летных проверок.

9.9 Заказчик осуществляет летные проверки за свой счет.

9.10 Составленный на основе свидетельства SAT, акта летных проверок и сертификатов практического обучения персонала протокол сдачи и приема (Приложение 5) является основанием для полного исполнения Договора.

9.11 Исполнитель проводит практические занятия сотрудников Заказчика.

9.12 Практические занятия должны проводиться согласно календарному плану, представленному в Приложении 4.

9.13 Практические занятия проводятся у Заказчика, на месте размещения Оборудования.

9.14 Специалисты, прошедшие практические занятия - 6 человек, чьи данные Заказчик предоставляет Исполнителю до начала занятий.

9.15 Длительность занятий в РА, г. Гюмри составляет не менее 5 дней, по 6 часов в день.

9.16 Исполнитель в результате практических занятий вручает сертификаты об окончании специалистам, прошедшим занятия.

9.7 SAT-ի արդյունքները պետք է համապատասխանեն Պայմանագրին կից Հավելված 1-ում ներկայացված տեխնիկական բնութագրերի բոլոր պահանջներին:

9.8 Տեղային ստուգումներից հետո Պատվիրատուն կազմակերպում և իրականացնում է շահագործման մեջ մտցնելու ծրագրով թռիչքային ստուգումներ, որին մասնակցում են Կատարողի մասնագետները: Կազմվում է թռիչքային ստուգումների Ակտ Պայմանագրի կատարման օրացույցային պլանի (Հավելված 4) համաձայն:

9.9 Պատվիրատուն իրականացնում է թռիչքային ստուգումները իր հաշվին:

9.10 SAT Վկայականի, թռիչքային ստուգումների Ակտի և անձնակազմի գործնական ուսուցման հավաստագրերի հիման վրա կազմված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված 5) հիմք է հանդիսանում Պայմանագրի ամբողջական կատարման համար:

9.11 Կատարողն անցկացնում է Պատվիրատուի մասնագետների գործնական պարապմունքները:

9.12 Գործնական պարապմունքները պետք է անցկացվեն Հավելված 4-ում ներկայացված օրացույցային պլանի համաձայն:

9.13 Գործնական պարապմունքներն իրականացվում են Պատվիրատուի մոտ՝ Սարքավորման տեղադրման վայրում:

9.14 Գործնական պարապմունքներ անցնող մասնագետները 6 հոգի են, որոնց տվյալները Պատվիրատուն Կատարողին ներկայացնում է մինչև պարապմունքների սկիզբը:

9.15 Պարապմունքների տևողությունը ՀՀ ք.Գյումրիում ոչ պակաս քան 5 աշխատանքային օր՝ օրական 6 ժամ:

9.16 Կատարողը գործնական պարապմունքների արդյունքում պարապմունքներ անցած մասնագետներին հանձնում է ավարտելու մասին հավաստագրեր:

## 10. Гарантия

10.1 Длительность гарантийного срока Оборудования начинается сразу же после окончания Договора (с момента двустороннего подписания отмеченного в пункте 9.10 протокола сдачи и приема) и составляет 2 года.

10.2 Если в течение гарантийного срока в поставленном оборудовании будут обнаружены недостатки и неполадки, то Исполнитель, советуясь с Заказчиком, в целесообразные сроки, но не позднее 30 рабочих дней с момента получения дефектного компонента, за свой счет устраняет неполадки компонента Оборудования и программного обеспечения. В данном случае все расходы на транспортировку товара покрывает Исполнитель.

10.3 В том случае, когда ремонт дефектного компонента невозможен в отмеченный в пункте 10.2 Договора срок, Исполнитель с момента возникновения обстоятельства, в течение 10 (десяти) рабочих дней, без дополнительной суммы для временного использования предоставляет Заказчику соответствующий запасной компонент (компоненты), а в случае невозможности ремонта - Исполнитель возвращает Заказчику новый.

## 11. Технический контроль за исполнением договора

11.1 Заказчик имеет право выполнять технический контроль за исполнением Договора в течение всего срока действия Договора.

11.2 Представители Заказчика имеют право в любое время присутствовать при выполнении работ и проверять их соответствие предусмотренным Приложением 1 требованиям.

## 10.Երաշխիք

10.1 Սարքավորման երաշխիքային ժամկետի տևողությունը սկսվում է Պայմանագրի ավարտից անմիջապես հետո (9.10 կետում նշված ընդունման-հանձնման արձանագրության երկկողմ ստորագրման պահից) և կազմում է 2 տարի:

10.2 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում մատակարարված սարքավորումներում կհայտնաբերվեն թերություններ և անսարքություններ, Կատարողը խորհրդակցելով Պատվիրատուի հետ, ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ քան անսարք բաղադրամասը ստանալու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում, իր հաշվին վերացնում է Սարքավորման բաղադրամասերի և ծրագրային ապահովման անսարքությունները: Նշված դեպքում ապրանքի տեղափոխման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է Կատարողը :

10.3 Այն դեպքում, երբ անսարք բաղադրամասի վերանորոգումը Պայմանագրի 10.2 կետում նշված ժամկետում անհնար է, Կատարողը նշված հանգամանքն ի հայտ գալու պահից 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում առանց լրացուցիչ գումարի տրամադրում է համապատասխան պահուստային բաղադրամաս (բաղադրամասեր) Պատվիրատուին՝ ժամանակավոր օգտագործման համար, իսկ վերանորոգման անհնարինության դեպքում Կատարողը Պատվիրատուին է վերադարձնում նորը: Նշված դեպքում ապրանքի տեղափոխման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է Կատարողը:

## 11.Պայմանագրի կատարման տեխնիկական վերահսկողությունը

11.1 Պատվիրատուն իրավունք ունի իրականացնել Պայմանագրի կատարման տեխնիկական վերահսկողություն Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում:

11.2 Պատվիրատուի ներկայացուցիչներն իրավունք ունեն ցանկացած ժամանակ ներկա լինել աշխատանքների կատարման ընթացքին և ստուգել դրանց համապատասխանությունը Հավելված 1-ով նախատեսված պահանջներին:

11.3 С целью обеспечения наблюдения за процессом выполнения работ и технического контроля с их стороны, а также с целью обеспечения координации работ, Заказчик назначает руководителя программы. Данные о руководителе программы представлены в статье 19 Договора.

11.4 В случае осуществления технического контроля на территории Исполнителя, последний обязан создать необходимые для технического контроля условия.

## 12. Обязанности и ответственность сторон

12.1 Стороны обязуются добросовестно и в полном объеме выполнять взятые на себя по Договору обязательства.

12.2 Стороны самостоятельно или по требованию другой стороны Договора могут взять на себя не предусмотренные Договором, однако необходимые для исполнения Договора действия, неисполнение которых может привести к неисполнению Договора или его ненадлежащему исполнению.

12.3 Исполнитель, в случае нарушения сроков выполнения взятых на себя Приложением 4 договорных обязательств, обязуется выплатить другой стороне штраф за каждый просроченный день в размере 0,05% от суммы договора, а также штраф в размере 0.5% от стоимости Договора.

В случае нарушения предусмотренных Приложением 3 сроков выплаты настоящего договора со стороны Заказчика, по отношению к Заказчику за каждый просроченный день устанавливается подлежащий выплате штраф, однако в размере 0,05% (ноль целых 5 сотых) от невыплаченной суммы.

12.4 В любом случае выполнения Работы, не соответствующей отмеченной в Приложении 1 настоящего договора технической характеристике, с Исполнителя взимается штраф в размере 0,5 (ноль целых пять десятых) процентов от отмеченной в пункте 3.1 настоящего договора суммы.

11.3 Աշխատանքների ընթացքին հետևելու և իրենց կողմից տեխնիկական վերահսկողություն, ինչպես նաև աշխատանքների համակարգումն ապահովելու նպատակով Պատվիրատուն նշանակում է ծրագրի ղեկավար: Ծրագրի ղեկավարի տվյալները ներկայացված են Պայմանագրի 19-րդ հոդվածում:

11.4 Կատարողի տարածքում տեխնիկական վերահսկողություն անցկացնելու դեպքում, վերջինս պարտավոր է ստեղծել տեխնիկական վերահսկողության համար անհրաժեշտ պայմաններ:

## 12. Կողմերի պարտավորություններն ու պատասխանատվությունը

12.1 Կողմերը պարտավորվում են բարեխղճորեն և ամբողջ ծավալով կատարել Պայմանագրով իրենց վրա վերցրած պարտականությունները:

12.2 Կողմերը ինքնուրույն կամ Պայմանագրի մյուս կողմի պահանջով կարող են իրենց վրա վերցնել Պայմանագրով չնախատեսված, սակայն Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գործողություններ, որոնց չկատարումը կարող է բերել Պայմանագրի չկատարման կամ դրա ոչ պատշաճ կատարման:

12.3 Կատարողը, Հավելված 4-ով իր վրա վերցրած պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետները խախտելու դեպքում, պարտավոր է վճարել մյուս կողմին յուրաքանչյուր ուշացված օրվա համար տույժ՝ պայմանագրի գնի 0,05%-ի չափով, ինչպես նաև տուգանք՝ Պայմանագրի գնի 0,5 %-ի չափով: Տույժի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ: Պատվիրատուի կողմից Հավելված 3-ով սույն պայմանագրի վճարման ժամկետների խախտման դեպքում, Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) չափով:

12.4 Սույն պայմանագրի Հավելված 1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

12.5 По установленному Договором порядку штраф и (или) пени рассчитываются и зачисляются выплачиваемыми суммами.

12.6 В случаях, не предусмотренных Договором, стороны при невыполнении или ненадлежащем выполнении своих обязанностей, привлекаются к ответственности по установленному законодательством РА порядку.

12.7 Выплата штрафа и пени не освобождает Стороны от выполнения своих договорных обязанностей.

12.8 В процессе исполнения Договора Заказчик ответственен:

- 1) за сохранность Оборудования до и в процессе размещения,
- 2) за обеспечение внутренних перевозок (автомобиль) на всех этапах Договора,
- 3) за обеспечение допуска специалистов Исполнителя на территорию аэродрома,
- 4) за обеспечение линий связи между оборудованьями системы согласно техническим требованиям Исполнителя,
- 5) за обеспечение питания оборудования согласно техническим требованиям Исполнителя,
- 6) до поставки Оборудования выполнить строительные работы, согласно представленному Исполнителем описанию сооружений для размещения предоставленного Оборудования.

12.9 В процессе исполнения Договора Исполнитель ответственен:

- 1) за предоставление и размещение материалов стандартного размещения,
- 2) за оптимизацию Оборудования.

12.10 В случае обращения Заказчика до 31 декабря 2028г., со стороны Исполнителя осуществляется послегарантийное обслуживание Оборудования, касательно которого заключается договор. При этом стоимость послегарантийного обслуживания должна быть не более 5% от стоимости Оборудования, указанной в Договоре. В договор о послегарантийном обслуживании должны быть включены обслуживание, модернизация и обновление программного обеспечения Оборудования, а также замена и

12.5 Պայմանագրով սահմանված կարգով տույժը և (կամ) տուգանքները հաշվարկվում և հաշվանցվում են վճարվող գումարներից:

12.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

12.7 Տույժի և տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

12.8 Պայմանագրի կատարման ընթացքում Պատվիրատուն պատասխանատու է՝

- 1) մինչև տեղադրումը և տեղադրման ընթացքում Սարքավորման պահպանման համար,
- 2) Պայմանագրի բոլոր փուլերում ներքին փոխադրումների (ավտոմեքենա) ապահովման համար,
- 3) Կատարողի մասնագետների աերոդրոմի տարածք մուտք գործելու ապահովման համար,
- 4) համաձայն Կատարողի տեխնիկական պահանջների, համակարգի սարքավորումների միջև կապի գծերի ապահովման համար,
- 5) համաձայն Կատարողի տեխնիկական պահանջների սարքավորումների սնուցման ապահովման համար:
- 6) մինչև Սարքավորման մատակարարումը կատարել շինարարական աշխատանքները՝ ըստ Կատարողի ներկայացրած Սարքավորման տեղադրման համար կառույցների նկարագրի:

12.9 Պայմանագրի կատարման ընթացքում Կատարողը պատասխանատու է՝

- 1) ստանդարտ տեղադրման նյութերի տրամադրման և տեղադրման համար,
- 2) Սարքավորման օպտիմալացման համար:

12.10 Մինչև 2028թ. դեկտեմբերի 31-ը Պատվիրատուի կողմից դիմելու դեպքում Կատարողի կողմից իրականացվում է Սարքավորման հետերաշխիքային սպասարկում, որի վերաբերյալ կնքվում է պայմանագիր: Ընդ որում հետերաշխիքային սպասարկման գինը չպետք է գերազանցի Պայմանագրում նշված Սարքավորման գնի 5%-ը: Հետերաշխիքային սպասարկման պայմանագրում պետք է ընդգրկվի Սարքավորման ծրագրային ապահովման վարումն ու թարմացումը, արդիականացումը, ինչպես նաև բաղադրամասերի

ремонт компонентов.

12.11 Заказчик обязуется выплатить Исполнителю стоимость Договора, а от Исполнителя получить Оборудование и Работу.

12.12 Заказчик имеет право:

12.12.1 Если была выполнена Работа, не соответствующая графику закупок - технических характеристик, отмеченная в Приложении 1 настоящего договора,

а) не принимать Работу, устанавливая по своему усмотрению разумный срок для безвозмездной замены Работы неподобающего качества Работой, соответствующей настоящему договору, и потребовать от Исполнителя выплату штрафа и пени, предусмотренных пунктом 12.3 настоящего договора.

б) отказаться от исполнения настоящего договора и потребовать возврата суммы, выплаченной за Работу и потребовать от Исполнителя выплаты штрафа, предусмотренного пунктом 12.4 настоящего договора.

12.12.2 Односторонне расторгнуть настоящий договор, если Исполнитель значительно нарушил настоящий договор. Нарушение со стороны Исполнителя считается значительным, если:

а) выполненная Работа не соответствует установленным Приложением 1 настоящего договора требованиям,

б) был нарушен срок выполнения Работы.

12.13 Исполнитель обязуется:

а) в предусмотренных настоящим договором случаях, выплатить штраф и пени, предусмотренных пунктами 12.3 и 12.4 настоящего договора.

б) в процессе обеспечения выполнения настоящего договора, в случае запуска процесса ликвидации или банкротства, заранее письменно проинформировать об этом Заказчика.

### 13. Конфиденциальность

13.1 Все документы и данные обеих сторон, касающиеся Договора, о том, что стороны

վերանորոգումն ու փոխարինումը:

12.11 Պատվիրատուն պարտավորվում է վճարել Պայմանագրի գինը Կատարողին և Կատարողից ստանալ Սարքավորումը և Աշխատանքը:

12.12 Պատվիրատուն իրավունք ունի՝

12.12.1 Եթե կատարվել է սույն պայմանագրի Հավելվածում 1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

